



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՇԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոններիդ պահելու կերպը, եւ մշտապէս պիտի կատարեմ վանոնք: Տուր որ հասկնամ Օրէնքդ, որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր: Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս, որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ: Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի, Քան անձնական հարստութիւն դիպելու: Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն, եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի: Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուր խոստումդ, այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն: Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ, որովհետեւ վճիռներիդ արդար են: Միակ փափաքս է՝ հրահանգներիդ կատարել. կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քու եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



ԱՌԱԿԱՅ 17 ԳԼՈՒԽ

## ԻՍՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՄՏՈՒԹԻՒՆ 17:10-28

Շարունակելով իմաստուն խօսքերը, որոնք յարուկ են մարդ արարածին, ու միայն մարդ արարածին, որպեսզի մարդը ըստ այնմ ապրի, ու մանաւանդ՝ պարտաստուի այնպէս մը, որ երբ ժամանակը գայ մեկնելու այս աշխարհէն ըստ այնմ պարտաստ ըլլայ: Որովհետեւ յաճախ որքան ալ կը փեսնենք, կը լսենք, մանաւանդ այս վերջին ժամանակահատուածին, երբ հարազատներ, ազգականներ, բարեկամներ այս կամ այն ձեւով կը մեկնին այս երկրաւոր կեանքէն, անոնց մեկնումը ցաւ կը պատճառէ, բայց որքանով մտածել կու տայ, որ յետոյ մեր հերթն է երթալու, որովհետեւ շատ որոշ է ու յարակ, որ մնայուն չենք, ու չենք կրնար ըլլալ, օր մը պիտի մեկնինք, սակայն հարցը մեկնիլը չէ, այլ որքանով պարտաստ ենք այդ մեկնումին, մանաւանդ մեկնումին պիտի յաջորդէ դիմաւորութիւն մեր արարիչին: Ահա այդ իսկ նպատակով Առակաց գիրքը իր իմաստուն խօսքերով կու գայ սորվեցնելու՝ եթէ չենք գիտեր, յիշեցնելու՝ եթէ մոռցեր ենք:

10րդ համարը կու գայ ըսելու, թէ խոհեմ մարդը, այն մարդն է, որ յանդիմանութիւնը լսելով անմիջապէս կ'անդրադառնայ, կը գիտակցի ու դարձի կու գայ, որովհետեւ որպէս մարդ, կրնանք սխալական ըլլալ, բայց այդ սխալին համար երբ յանդիմանութիւն լսենք, անմիջապէս զգաստութեան կը հրաւիրուինք, ուրվհետեւ այդ յանդիմանութիւնը մեր օգուտին համար էր, իսկ եթէ այդ խոհեմութիւնը չունինք, ոչ միայն յանդիմանութիւնը կը լսենք, ընդհակառակը, կը մերժենք, առաւել եւս նոյնիսկ զաւագանի հարուածը օգուտ մը կրնայ չունենալ: Ահա այս խօսքին իբրեւ հետեւանք, երբ չար մարդը ոչ թէ միայն խօսքով, ոչ թէ միայն զաւագանով, այլ նոյնիսկ ամէն առիթ կ'օգտագործէ ապստամբելու, չարութիւն գործելու 11րդ համար:

Շեքսպիրական արտայայտութիւն մըն է 12րդ համարը, ուր յիշեցում եւ զգուշացում մըն է որ կ'ընէ, երբ կ'ըսէ. «Աւելի աղէկ է ձագերը գողցում արջին դիմաց ելլելու, քան յիմարին՝ իր յիմարութեան ժամանակ», թէ որքան վրանգաւոր է: 13րդ համարը մէկ այլ իմաստուն խօսք մըն է, ուր կու տայ մեզի պարտասխանը այն հարցումին երբ յաճախ կը փառապինք այդ երեւոյթով. «Ով որ աղէկութեան փոխարէն չարիք կը հարուցանէ, չարիքը անոր փունէն պակաս պիտի չըլլայ»: 14րդ համարը կը զգուշացնէ հեռու մնալու կռիւէ, այլապէս ինչպէս որ ջուրը անգամ մը որ իր ընթացքը ունենայ ալ դժուար թէ կանգնեցնել, նոյնպէս ալ կռիւի հասկացողութիւնը: 15րդ համարը զգուշացում է արդար դարաստան փեսնելու, որպէսզի յանկարծ չըլլայ թէ ամբարիշտը արդարացնել, իսկ արդարն ալ իբրեւ ամբարիշտ համարել: 16րդ համարը յիշեցում մըն է, թէ ինչպիսին ալ ըլլայ գիւր իմաստութեան, յիմարին համար ոչ մէկ արժէք ունի:

Յաջորդող համարները ցոյց կու տան մարդու նկարագիրը թէ ով ինչպիսին է եւ ինչ բան կը փնտռէ կեանքին մէջ, օրինակ. «կռիւ սիրողը յանցանք կը սիրէ», «իր սուրը բարձրացնողը իր կործանումը կը փնտռէ», «ծուռ սիրտ ունեցողը աղէկութիւն չի գտներ», «նենգաւոր լեզու ունեցող մարդը չարիքի մէջ կ'ինայ», ճշմարտութիւններ են, որոնք ցոյց կու տան հետեւանքը եւ արդիւնքը ինչ բան որ կը փնտռենք: Խորքին մէջ այս բացատրութիւնները նախազգուշացումներ են, որոնք պարտաստութեան առիթ են:

Շեքսպիրական է 22 համարը, որ նաեւ մէկ փարբերակն է Պօղոս Առաքեալի խօսքին երբ կ'ըսէ. «Ուրախ եղէք, ուրախ եղէք, դարձեալ կ'ըսեմ ուրախ եղէք Տիրոջմով»: Այսօր հազար ու մէկ ձեւեր կը փնտռենք, կ'որոնենք, դրամ կը ծախսենք այդ ուրախութիւնը ձեռք ձգելու համար, բայց քեսէք Առակաց գիրքը ուրիշ բանի մէջ կը փեսնէ այդ ուրախութիւնը, սրտի ուրախութիւն, որ սիրտս լեցուն է ուրախութեամբ: Ընդհանրապէս մեր փունէրը կրնան լեցուն ըլլալ, մեր սեղանները կրնայ ճոխ ըլլալ, մեր գրպանները կրնան լեցուն ըլլալ, բայց փակաւին պարտաստութիւն մը կայ, այո, որովհետեւ այդ բոլորը նոյնիսկ եթէ ժամանակաւոր ուրախութիւն փան, սակայն այդ ուրախութիւնը խաբուսիկ ուրախութիւն է, կեղիս ու ժամանակաւոր: Անոր համար ալ Առակաց գիրքը կու գայ եւ կ'ըսէ. «ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է, բայց կոտրած սիրտը ոսկորները կ'ը չորցնէ», իսկ ինչ բանէ մեր սրտերը կը կոտորին եթէ ոչ մեղքի պատճառով, ուրիշին ցաւցնելով:

Յաջորդող համարները դարձեակ կը ներկայացնեն այն իրավիճակը թէ ինչպէս անօրէն մարդը արդարութեան ճամբան ծռելու համար կաշառք կը վերցնէ 23 հմր: Խոհեմ մարդը միշտ իմաստութեամբ կ'առաջնորդուի 24 հմր: Այն զաւակը որ իմաստութեամբ չ'ապրիր, ուրիշ բան չէ եթէ ոչ իր ծնողքին փրկման 25 հմր: 27-28 համարները ցոյց կու տան թէ նոյնիսկ յիմարը եթէ կրցաւ գուսալ ըլլալ ու լուռ մնալ իմաստուն ու հանճարեղ կը սեպուի: Այլ խօսքով երբ, ուր, ինչ առիթով եւ ինչպէս լեզուն գործածելու մասին է, որ միայն կրնանք այդ բոլորը ընել երբ իմաստութեամբ կ'առաջնորդուինք: